

Թեամբ տարածում է լուրեր այն դիտաւորութիւնների մասին, որոնք ծագել են Լրոպական մի քանի կառավարութիւնների մէջ՝ ցոյց տալ խաղաղ միջնորդութիւն՝ ռուս-ճապոնական ընդհարման շուտափոյթ աւարտման համար։ Ստացուած հեռագիրները հաղորդում են նոյնիսկ, իբր այդ մտքով արդէն առաջարկութիւններ են արուած Կայսերական կառավարութեան։ Դուք լրագործում էք ամենակտրուկ կերպով հերքելու այդ լուրը։ Ռուսաստանը չէ ուզում պատերազմ. նա արել էր, հնարաւորութեան սահմաններում, ամեն բան, որպէսզի խաղաղ ճանապարհով լուծուեն Հեռաւոր-Արեւելքում ծագած բարդութիւնները, բայց ճապոնիայի դաւադրական յարձակումից յետոյ, որ ստիպեց Ռուսաստանին զէնքի դիմել, ակնյայտ է, որ ոչ մի խաղաղ միջնորդութիւն չէ կարող աջակցութիւն ունենալ։ Նոյնպէս Կայսերական կառավարութիւնը թոյլ չի տայ որեւէ պետութեան միջամտութիւնը անմիջական բանակցութիւններում։ Ռուսաստանի և ճապոնիայի մէջ պատերազմական գործողութիւնների վերջանալուց յետոյ խաղաղութեան պայմանները որոշելու համար։ Վերոգրեալը հաղորդում է ձեզ ի գիտութիւն և ի հրահանգ։

Նշանաւոր է և՛ այն որ հրամայուած է կազմել Խաղաղ Ովկիանոսի երկրորդ էսկադրա, որ յունիսի 15-ին պէտք է ուղևորուի պատերազմի բեմը։

Այդպէս ուրեմն միջամտութեան ըրպէն չի հասել, և մեր առաջ են դեռևս աւելի սարսափելի արիւնհեղութիւններ։

Լ. Ս.

Ապր. 21.

—Արիսիւնիայի Ադիս-Աբաբ քաղաքից «Մշակ»-ին գրում են. «Տեղւոյս հայ գաղթականաց թիւն օրըստօրէ ստուարանալու վրայ է. մեր նախորդ յօդուածով կը գրէինք թէ հայերը 54 հոգի են հոս, այժմ այդ թիւը բարձրացած է մի քանի ամսուան ընթացքին մէջ 85-ի։ Եթէ այսպէս արագօրէն շարունակուի այս ստուարացումը, ինչ որ յուսալի է, մօտաւոր ապագայի մը մէջ բաւական կարևոր գաղթականութիւն մը պիտի ունենանք Հապեշիստանի մէջ։

Ինքնաբերաբար եկող նոր գաղթականներ գրեթէ բնաւ չի կան. եկողները առհասարակ մօտաւոր ազգականներն են հոս գտնուող գաղթականներուն, որոց հրաւիրանօք եկած են։ Ուրախ ենք, որ այժմ մեր փոքրածիւ հայ գաղութի մէջ զարգացեալ գէթ փոքր դասակարգ մը ունինք և յուսալից ենք, որ

այս դասակարգը իր մշակեալ իմացականութեամբ և բարեկերթութեամբ կարողանայ ազդել մեծամասնութեան վրայ: Լսարան-ընթերցատան կազմակերպութեան գաղափարը պարտ ենք այս դասակարգի, իսկ այդ գաղափարի գործադրութիւնը մեծամասնութեան նիւթական գնահատելի օժանդակութեան: Մի քանի ամսուան բաժանորդագրութեան և փոքր հանգանակութեան մը արդիւնքն յանգեցաւ շուրջ 900 ֆրանկի, ուրկէ 700-ը յատկացուեցաւ անմիջապէս հայկական, ֆրանսիական, անգլիական օրաթերթերու և հանդէսներու բաժանորդագրութեան ու հայկական, ֆրանսիական, անգլիական նորագոյն հրատարակութեանց, ու կարևոր տեղ մը կը ընեն արհեստական, գիտական, պատմական և աշխարհագրական երկասիրութիւններն: Իսկ լսարան-ընթերցատան համար մասնաւոր շէնքի մը կառուցուի, որ նախապէս ծրագրուած էր, յետաձգուած է պռայթմ, մինչև որ բաւականաչափ դրամագլուխ մը կազմուի: Որոշուած է առժամապէս շէնք մը վարձել, որ թէ պիտի լինի ժողովատեղի հայ գաղութի ընդհանուր ժողովոյ և դատական—Հաշտարար Եանձնաժողովոյ և թէ լսարան-ընթերցատուն:

Կը մաղթենք, որ այս լսարան-ընթերցատունը տեական հիմնարկութիւն մը լինի տեղւոյս հայ գաղութին մէջ և արտաքսելով մեր մէջէն բամբասանքն և զրախօսութիւններն, հրդօրապէս ներգործէ մեր իմացական բարձրացման վրայ աւելի մաքուր հորիզոններ բանալով մեր սրտին և մտքին հանդէպ:

Յ. Գ. Այս տողերը աւարտելէ վերջ գոհութեամբ կը տեղեկանանք թէ հրապարակիս ծանօթ վաճառականներէն մեծ տիար Սարգիս Թերզեան, որ Հապեշիստանի ռազմամթերքի գործարան մը հիմնելու մենաշնորհն ստացած էր, յատուկ հրովարտակով կայսրէն Ներոպա էր ուղևորուած կայսեր հրամանով՝ քաղաքս վերադարձած է տասնամեակայ բացակայութենէ վերջ:

—«Նոր-Ջուղայի լրաբեր» թերթից իմանում ենք, որ այժմ Ջաւա և միւս կղզիների վրայ (Սումատրա, Բալի, Սելեբէս) հայերի թիւը մօտաւորապէս 170 է, որոնց մեծ մասը Պարսկաստանից են գաղթել: Բաթաւիա քաղաքում մերձ 50 հայ, որոնցից 30 հոգի արական, իսկ 20 իգական սեռից: Սուրբայեա վաճառաշահ քաղաքում 10 տուն հայ կայ մերձ 30 հոգի. գըլխաւորաբար պարապում են վաճառականութեամբ: Սուքարումի գիւղում 2 տուն հայ. Բանդոնգ գիւղում երկու ընտանիք. Մամարանգ ծովկերեայ քաղաքում 4 տուն. Բալի կղզու վրայ Սիգարալա քաղաքում 12 հոգի. Մալանգ գիւղաքաղաքում 4 տուն, Մակասարում 10 հոգի, Ջաւայեան կղզիների այլ տեղի-

րում ևս կան հայեր (Ամպնան, Մոճուկրատ, Սուլ, Տուլունգան-գու և այլն) իւրաքանչիւր տեղում 1—4 հոգի:

Ընդհանուր առմամբ նիւթապէս միջակ վիճակի մէջ են: Գաղթականութեան սկզբնական շրջանում Զաւայեան կղզիներէ առևտուրը գլխաւորաբար հայերի ձեռքն է եղել, սակայն հետեղհետէ անցել է եւրոպացոց ձեռքը. և սպասելի էր, քանի որ եւրոպացիք ընդհանրապէս մեծ դրամագլխի հետ միացնում են աւելի մեծ վաճառականական պատրաստութիւն և նախաձեռնող ոգի:

Զաւայեան կղզիներէ վրայ բնակւող համարեա բոլոր հայերը (շատ քիչ բացառութեամբ) խօսում են հայերէն, քանի որ մեծամասնութիւնը գնացել է Նոր-Ջուղայից, և երբեմն ևս օգնում են Ջուղայի ազգային հաստատութիւններին նիւթապէս: Հասկանալի է, որ այս փոքրիկ գաղութը չունի ապագայ, եթէ մինչև այժմ էլ մնացել է Ջուղայում հայութիւն, նախ շնորհիւ նախնիքների հիմնած ազգային հաստատութիւնների և երկրորդ շնորհիւ շարունակ Ջուղայից գնացողների: Տեղում ծնուողներն ու կրթուողները մեծ մասամբ արդէն խորթացած օտարացած են (բացառութիւններ քիչ կան), չգիտեն իրանց մայրենի լեզուն, չեն հետաքրքրւում ոչ մի ազգային գործով:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

„Русское Богатство“, № 3.—Ռուս-ճապոնական ընդհարումը առիթ է տուել ռուս օտարակեր հրապարակախօսներից մէկին՝ Մենշիկովին „Нов. Вр.“-ի միջոցով տարածել այն հրէշաւոր միտքը, թէ ներկայ պատերազմն արդիւնք է հրէական ագիտացիայի այն երկրներում, ուր մամուլը և բիրժան նրանց ձեռքումն է: Արիւնով ասիացիներ՝ ասում է Մենշիկով, դուրս եկած մերձաւոր արեւելից՝ հրէաները առաջին հարուածը տալիս են հէնց Ասիայից—Հեռուոր Արեւելից: Հարկւոր տարի է, որ մենք յետաձգում ենք հրէական հարցը և ասա ներքին ախտը դուրս է տալիս այժմ շարանշան կերպարանքով: Ռուսաստանից խոյս տուածները

մեր դէմ կօտլիցիա են կազմակերպում, մեր թշնամիներին փոխառութիւններ են դառնում և ճապոնական կայսրին զրահաւոր են մատուցանում ընծայ:

«Рус. Богат» իր № 3-ում խօսք չի դառնում նշաւակելու անմոտութեամբ հրէշաւոր այս մեղադրանքը:

«Վերջին ժամանակ շատ բանի սովորեց մեր զրականութիւնը, ասում է յիշեալ ամսագիրը. բայց նա քիչ անգամ էր տեսել անմիտ շողակրատութեան և թունոտ շարութեան այնպիսի զուգակցութիւն, որպիսին կարողացաւ ստեղծել պ. Մենշիկով յիշեալ տողերով:

«Պ. Մենշիկովը հասակ առած մարդ է և ցանկանում է խօսել նոյնպիսի